

Վիշապներու, երկընթին մէջ սրփոեցիր
 Զերդ արեւու հունտեր, աստղերն Յարդգողին.
 Ուժի՛ն համար՝ որ թըռիչն է եւ հոգին
 Արարչութեան անվախճան,
 Որուն անհուն համբոյրին տակ կը ծընի
 Աշխարհներէն մաս մը ծաղիկ, մաս մը բոց,
 Կ'ապրի սկզբունքն Ամահոյթեան հիւլին մէջ
 Եւ ըղեղին եւ կամքին,
 Որուն հրգօր մատին տակ
 Կը ճեղքըին սերմերն, աիշն երգելով
 Կաղնիներուն մինչեւ գագաթը կ'ելլէ.
 Ուժի՛ն համար՝ որ կը լեցնէ ստինքներ,
 Կ'օրօրէ՛ մեր որբանն, ու մեզ, մահէն վերջ,
 Մինչեւ աստղերը կը տանի, ու մինչեւ
 Երկրորդ կեանքի մ'արարչագործ պատճառին,
 Որ կը կանգնէ ազգ մ'ինչպէս խումբ մ'առիւծի,
 Բազուկդ անոր բազուկին մէջ կը հեղու,
 Եւ զերդ հրեղէն վարագահաւ՝ իր լուսեղ
 Թըռիչներուն ամփոփման տակ կը թըխսէ
 Մեր մայրերուն ծոցին մէջ
 Դիցագուններ, հանճարներ,
 Այդ սուրբ ուժին համար կ'ըսեմ՝ որուն դու
 Իմացական աղբերակն ես յորդահոս,
 Ո՛վ դու Վահագն, ահա քեզի կարկառած
 Բազուկներս իմ արինոտ
 Կ'աղօթե՛մ ես... կ'աղօթեմ...

Յեղին սիրտը թէ՛ եւ մեծապէս նուիրուած հայ տառապանքին, սակայն իր մէջ կը պարունակէ հետզհետէ ընդհանրանալու սաղմերը. բանաստեղծը հանգստի կարճ միջոցի մը պէտք ունի ազատուելու համար անձուկէն, սահմանափակէն, իր եսը խառնելու համար ընդհանուրին ու նաեւ տիեզերականին:

Սակայն քանի՛ չքնաղ էջեր են Յեղին սիրտըն մէջ Հովիւր, Վահագնը, Կարօտի նամակը, Յաղթողը, Անին,